Արձանագրություն N 2

ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Առողջության ապահովագրման ծառայություն»

ք. Երևան 25 մայիս 2018թ
ժամը 9:30

Մասնակցում էին՝
նախագահ՝ Հովհաննես Թորոսյան (ԳՊ/ԳԱՊ)
անդամներ՝ Գևորգ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)
Կարապետ Կոգարով (ԳՊ/ԳԱ)
Անահիտ Կարապետյան (ԳՊ/ԲԱ)
Ալիսա Կարապետյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մեհրաբյան

1. Գնային առաջարկների բացման մասին

(Հ.Թորոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և կարգին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը

N	Մասնակիցների անվանումները	Կոնտակտային տվյալները
1	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	էլ. հասցեն՝ info@RGS.am
2	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	էլ. հասցեն՝ info@ingoarmenia.am

բ) Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են

Չափաբաժնի համարը	Անվանում	Նախահաշվային գինը	Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ	ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ
			Չի հանդիսանում ԱԱՀ վճարող	Չի հանդիսանում ԱԱՀ վճարող
1	Առողջության ապահովագրման ծառայություն	67.800.000	57.960.000	107.250.000

2. Ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Հ.Թորոսյան)

2. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են **ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/3** ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին:

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն որոշեց՝

1) I տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ-ին

II տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ին:

2) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

3) I տեղը զբաղեցրած մասնակցին՝ Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ-ին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը՝ Հավելված 5, <<Մասնագիտական փորձառության>> որակավորման չափանիշը հավաստող փաստաթղերը, ինչպես նաև պայմանագրի նախագծի հավելված 1.1-ում նշված բուժհաստատությունների կողմից վավերացված տեղեկանքներ, որոնք կհավաստեն Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ-ի հետ կնքված և գործող համագործակցության պայմանագրերի առկայությունը՝ նշելով համագործակցության պայմանագրերի համարները: Համագործակցության պայմանագրերը պետք է վերաբերեն կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերի ներքո ապահովագրված անձանց սպասարկմանը, այլ ոչ թե ՀՀ կառավարության 915-Ն որոշման համաձայն՝ սոցիալական փաթեթի շահառուների սպասարկմանը, որի կապակցությամբ 2017 թվականի հոկտեմբերի 1-ից բոլոր ապահովագրական ընկերությունները կնքել են ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագրեր:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ Հովհաննես Թորոսյան

Անդամներ Գևորգ Հարությունյան

Կարապետ Կոգարով

Անահիտ Կարապետյան

Ալիսա Կարապետյան

Քարտուղար Ռոզա Մեհրաբյան